№ 243 Դեկտեմբերի 30 | 1881 | Դեկտեմբերի 30 № 243

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարւանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ· Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Մասիս» լրագրի յօդուածը:—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Մի յայտարարութիւն: Նամակ Բագուից: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Թիւրքիա և Գերմանիա: Իտալիա: Աւստրո-Ունգարիա: Նամակ Թիւրքիայից: Նամակ Պարսկաստանից:—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

## „ՄԱՍԻՍ“ ԼՐԱԳՐԻ ՅՕԴՈՒԱԾԸ

Երբ վիէննայի „Ժուրնալ դ'Օրիան“ լրագիրը սկսեց պաշտպանել հայոց դատը, Կ. Պօլսի „Մասիս“ լրագիրը համակրութեամբ ողջունեց այդ թերթի հրատարակվելը: Բայց այժմ, երբ Թիւրքաց կառավարութիւնը արգելեց այդ թերթի մուտքը Թիւրքիայի սահմաններում, նոյն „Մասիս“ լրագիրը, կառավարութեանը շողոքորթելով, լրբաբար հաւատացնում է որ վիէննայի թերթը ոչ թէ միայն անօգուտ է, բայց և կատարելապէս վնասակար է հայերի համար:

„Մասիս“ լրագիրը շարունակում է մեզ վրա յարձակվել մեր գրած մի քանի յօդուածների պատճառով Երուսաղէմի վանքի առիթով: Եւ յանկարծ այդ խնդրի վրա խօսելով, կապում է նրա հետ և վիէննայի լրագրին մեր միջոցով հաւաքված և նրան ուղարկված բաժանորդական գումարը:

«Այն ազգային գումարով որ Գր. Արծրունու միջոցով յապարդինս ղրկվեցաւ Ժուրնալ դ'Օրիանին, ի՞նչ կարևոր պէտքեր չէին լցուեր ազգին մէջ“ բացականչում է լրբաբար „Մասիս“ լրագիրը: «Մասիս» անամօթաբար մոռանում է թէ ի՞նչ ահագին գումարներ մենք արդէն հանգանակած և ուղարկած ենք Թիւրքիայի հայերին նրանց այլ և այլ պէտքերի համար: Ի՞նչի ինքն ոչինչ չէ հաւաքում, եթէ մեր արածը չէ հաւանում: Բայց, ինչպէս երևում է, ինքն Կ. Պօլսի թերթը մի կոպէկի հաւատարմութիւն չունի ազգի մէջ:

Փաստ, խղճութիւն Կ. Պօլսի լրագիրը չէ բերում թէ ինչով վնասակար է վիէննայի ֆրանսիական թերթը, միայն բաւականանում է, ինչպէս միշտ, վայր ի վերոյ խօսքերով և հայհոյանքներով:

Լաւ է որ «Մասիսի» պէս մի թերթ եւրոպացիները չեն կարդում, եթէ ոչ մեծ ամօթ կը լինէր հայերի համար, եթէ եւրոպացիները կարդալով „Մասիսի“ լիրբ յարձակումները „Ժուրնալ դ'Օրիանի“ և նրա խմբագրի վրա, որին Կ. Պօլսի թերթը յանդգնում է անուանել շահախնդիր եւրոպացի, հրէայ և այլն, իրանք իրանց կը հարցնէին. «ի՞նչ տեսակ ազգ են այդ հայերը. մի եւրոպացի անձնուիրաբար յանձն է առնում հիմնել մի հայոց օրգան, պաշտպանել Թիւրքաց հայերի դատը և իրանք հայերը, փոխանակ երախտագիտութեան զգացմունքի, որ վերջապէս հիմնվել է Եւրոպայի մի մայրաքաղաքում մի հայոց օրգան, բաւական խօսքեր չեն գտնում որ հայհոյեն եւրոպացի խմբագրին:“

Բաղդաւորապէս «Մասիս» լրագրի յարգը վաղուց է արդէն այն աստիճան ընկած է, որ ոչ ոք չի մտածի այդ լրագիրը ընդունել որպէս թարգման հայ ազգի հասարակական կարծիքի:

Սրանից աւելի խօսել «Մասիս» լրագրի հետ մենք մեր արժանաւորութենից ստոր ենք համարում:

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՄԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

„Մշակի“ ներկայ համարում տպագրվում է մեր յայտարարութիւնը «Գործ» ամսագրի մասին. այդ առթիւ աւելորդ չենք համարում մի քանի խօսք ասել:

Մենք դուրս ենք գալիս ժողովրդի առաջ՝ նրան գրեթէ, բոլորովին անծանօթ և առանց աշխատելու կանխաւ հեղինակութիւն և անուն ստանալ: Այդ սովորական կարգից դուրս է, խոստովանում ենք:

Բայց մենք դուրս ենք գալիս նորա առաջ անարատ զգացմունքներով և մի միակ ցանկութեամբ.—ծառայել ժողովրդին:

Ոչ մի քաջալերական օրինակ չը կայ մեր առաջ՝ անցեալից կամ ներկայից. բայց կայ, հաւատացած ենք, մի զօրեղ ու աննկուն նեցուկ, որի վրա մենք կարող ենք կռթնել: Դա այն մատաղ սերունդն է, որի միտքը դեռ մաքուր, անխռով է, որն ապրում է ընկերի համար և ապա իրեն համար. այն երիտասարդութիւնը, որի մէջ եռում, եփում է կեանք և հասարակական զգացմունքներ: Մեր յոյսն այդ մատաղ սերնդի վրա է, որը պէտք է ազատ լինի ներկայ բուրժուազական ոգուց և չը պէտք է մասնակցի սուտ ինտելլիգենցիայի խարդաւանանքներին:

«Գործը» նուիրում ենք հայ երիտասարդութեանը ու նորա միջոցով ժողովրդին.—Թող նա էլ ընդունէ, ինչպէս իրեն արժան է համարում:

Շուշի Սիմէօն Հախումեան

### ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Դեկտեմբերի 17-ին

Առանձին հաճութեամբ քաղցր պարտականութիւն եմ համարում ձեր լրագրի միջնորդութեամբ յայտնել ընթերցարանիս վարչութեան անկեղծ շնորհակալութիւնը բարեսիրտ բողոքական հայ հասարակութեան՝ որ նրանք ի յիշատակ բժ. Ռոստոմեանցի և Ստ. Նազարեանցի հանգանակելով իրանց մէջ 50 րուբլ նուիրեցին ընթերցարանիս մի զոյգ գեղեցիկ և յարմար լապտեր: Ցաւով եմ, պատւարժան պ. խմբագիր, որ ներկայ տողերը զետեղելով ձեր պատուական լրագրի էջերում, վկայ և թարգման կը լինէք ընդհանուր հայ հասարակութեան առաջ՝ որ մեր բողոքական արիւնակիցները և համակրող և նախանձախնդիր են այն բոլոր գեղեցիկ գործերին՝ որոնք յանուն ազգային դաստիարակութեան հասարակաց նուիրատուութեամբ են սկսվում և պահպանվում: Տնօրէն ընթերցարանիս Մարդասիրական ընկերութեան

Բժ. Արամեանց

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յայտնում ենք որ բացի մեր խմբագրատանից ԹԻՖԼԻՍԻ բաժանորդները կարող են գրվել «Մշակին» և պ. Շահվերդեանի պավիլիօնում, Ալէքսանդրեան այգու մօտ:

—

ԲԱԳՈՒԻ հայ-բողոքականներից եօթ հոգի, Աւագ Վարդանեանց, Գալուստ Թառայեանց, Յովհաննէս Թառայեանց, Յակոբ Թառայեանց, Աղաջան Արուտչեանց, Արտէմ Գրիգորեանց և Պետրոս Սերգէեանց գրվել են «Մշակի» եօթ օրինակի վրա և բացի սրանից ուղարկել են մի մի րուբլ աւելի, որպէս զի երբ կազմվի 10 րուբլ, նուիրենք մի օրինակ «Մշակ» լրագրի ում հարկաւոր կը դատենք: Շնորհակալութիւն ենք յայտնում մեր աւետարանական եղբայրներին իրանց համակրութեան համար դէպի մեր լրագիրը:

—

Ստացանք ԱՍՏՐԱԽԱՆԻՑ պ. Աւետիս Թումայեանցից 15 րուբլ «Միացեալ ընկերութեան» համար և 5 րուբլ «Ժուրնալ դ'Օրիանի» բաժանորդագին: Նոյնպէս «Ժուրնալ դ'Օրիանի» համար ստացանք 8 րուբլ Բագուից, պ. Աւագեան Կօլմանեանցից: Առաջվայ 587 րուբլ փողի հետ վիէննայի լրագրի համար կունենանք այժմ 600 րուբլ:

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են: «Անկարգութիւնը մեր փոստատան մէջ լրագիրների վերաբերութեամբ շարունակվում է: Երբ հայոց լրագիրները գալիս են, փոստատան մէջ, նրանց անհոգ կերպով շպրտում են մի անկիւնի մէջ և առաջին հասնողը կարող է առանց ոչ ոքից հարցնելու տանել այնքան համարներ, որքան կը կամենայ: Նրանք, որոնք լրագրին փողը տալիս են, գրեթէ չեն ստանում իրանց համարները, իսկ ես ճանաչում եմ հայ վաճառականներին, որոնք գալիս են փոստը, վերցնում են 20 կամ 30 համար «Մշակից» կամ «Մեղուից» և տանում իրանց դուքանը ապրանքներ փաթաթելու համար: Զարմանալի է որ ռուս լրագիրների հետ փոստատունը այսպէս չէ վարվում, այլ լաւ պահում է ու միայն իրանց տէրերին հասցնում: Նշանաւորն այն է որ փոստի կառավարիչը, որ այդքան արհամարհանքով վարվում է հայ թերթերի հետ, ինքն էլ հայ է: Եթէ այդպէս շարունակվի, աւելի լաւ կանէք մի կապոցի մէջ դրված ուղարկէք «Մշակի» համարները մեզանից մինի անունով, իսկ մենք ինքներս կը բաժանենք միւս բաժանորդների մէջ:»

—

Կիևից գրում են «Русскій Курьеръ» լրագրին: Այս օրերս, երբ այստեղ լուր հասաւ թէ այսուհետև արական գիմնազիաներում ուսման վճարը բարձրացրին մինչև 100 րուբլ, իսկ իգական գիմնազիաներում մինչև 150 րուբլ, այդ լուրը սաստիկ տխուր տպաւորութիւն ունեցաւ հասարակութեան վրա: Շատերը ծնողներից պէտք է հրաժարվեն իրանց զաւակներին միջնակարգ ուսում տալու դիտաւորութիւնից: Այժմ էլ ծանր էր շատերի համար վճարել իրանց որդկերանց ուսման համար տարեկան 45 րուբլ: Այդ լուրին շատերը չեն կամենում հաւատալ, իսկ եթէ դա ուղիղ է, ընդհանուր ցանկութիւնն է որ գոնէ բացի գիմնազիաներից լինէին ընդհանուր կրթողական ուրիշ դպրոցներ, ինչպէս օրինակ գաւառական դպրոցներ, որ այժմ այլ ևս չը կան:

—

«Русскій Курьеръ» լրագիրը հաղորդում է որ 21-ին դեկտեմբերի Մոսկվայի հայ սիրողները տուեցին Սօլօդօվնիկօվի թատրօնում մի հայերէն ներկայացում: Խաղացին «Կոյր» պիէսան և Գ. Սունդուկեանցի «Գիշերվայ սարը խէր է» վօդէվիլը: Ներկայացմանը ներկայ էին ոչ թէ միայն հայեր, բայց և այլ ազգութիւններին պատկանող բազմաթիւ կովկասեցիներ, ինչպէս վրացիք և կովկասեցի ռուսներ: Ներկայացումը շատ լաւ անցաւ: Նրա մէջ մասնակցում էր պ. Լիանօզօվի 9 տարեկան աղջիկը, որ իր հասակին համեմատ ընծաներ ստացաւ: Ներկայացման զուտ արդիւնքը, որ պէտք է գործ դրվի Մոսկվայի չքաւոր հայ ուսանողների օգտին, եղաւ, լրագրի կարծիքով, մօտ 1000 րուբլ:

—

Դոկտոր Անդրէաս Արծրունի գրում է մեզ Բեռլինից: «Այս օրերս տեսայ պրոֆէսոր Կիպերտին: Նա ինձ ցոյց տուեց Հայաստանի հայերէն ձեռագիր աշխարհացոյց, որ Ալիշանի տուած տեղեկութիւնների վրա հիմնվելով, նա ինքն գծագրել է: Այդ քարտէզը նա դիտաւորութիւն ունի հրատարակել. դա չորս թերթից բաղկանալով, ամփոփում է ամբողջ Հայաստանը (Փոքր և Մեծ Հայք) և Կիլիկիան: Կիպերտ չէ իմանում թէ ում հաշւով պիտի հրատարակվի այդ քարտէզը, բայց ինչպէս ասում է, կարողացել է Ալիշանի խօսքերից հասկանալ թէ մի քանի հարուստ հայեր նրան միջոցներ առաջարկեցին այդ հրատարակութիւնը գլուխ բերելու համար: Բայց աւելացրեց Կիպերտ, գործը ինչպէս երևում է դեռ ամբողջապէս վերջացած չէ նրանց մէջ և պրոֆէսորը դեռ ևս հաստատ լուր չունի, որ սկսի փորագրել տալ քարտէզը:»

—

Վիէննայի սարսափելի հրդեհից յետոյ ամբողջ Ռուսաստանում կազմվեցան յանձնաժողովներ, որոնք նայում են թատրօնների շինութիւնները: Թատրօններից շատերը փակվեցան անյարմարութեան պատճառով: Թիֆլիսումն էլ այս օրերս յանձնաժողովը նայեց երկու թատրօններ և ցիրկը: Արծրունու թատրօնը գտնվեցաւ ամենաբաւականացուցիչ դրութեան մէջ: Այդ թատրօնը իր փոքրութեան համեմատ (պարունակում է միայն 400 հոգի) ունի 8 դուռ պարտէրից, որոնք բոլորն էլ բացվում են դէպի դուրս, թատրօնի տասն երկու լօժաներ ունեն երկու սանդուխներ, ուրեմն իւրաքանչիւր վեց լօժայի վրա մի սանդուխտ կայ, բալկօնը առանձին մուտք և առանձին սանդուխտ ունի, բեմն էլ երեք կողմերից ելքեր ունի: Բացի գազի լուսաւորութիւնից թատրօնի մէջ կայ և մոմի լուսաւորութիւն, այնպէս որ եթէ պատահմամբ գազը հանգչի, հասարակութիւնը շատ հեշտութեամբ իր ճանապարհը կը գտնի մոմերով վառած լապտերների լոյսի օգնութեամբ: Թատրօնի պատի վառարանները, որոնք ամենացուրտ ժամանակն էլ շատ տաք են պահում թատրօնը, վերջանում են վառվել և ծածկվում են արդէն 3 ժամին կէսօրից յետոյ: Բալկօնի սանդուխտի վրա էլ բացի գազի լուսաւորութենից կան մոմով լուսաւորվող լապտերներ:

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ

„Порядокъ“ լրագրին գրում են հետևեալը:

Բ. Դուռը ամեն զգուշութիւններ է գործ դնում որպէս զի գաղտնի պահի Բերլինի հետ իր ունեցած բանակցութիւնները: Բայց ամենքին պարզ է, որ իշխան Բիսմարկին ջերմեռանդ երկրպագութիւնը Թիւրքերի կողմից և Գերմանիայի հետ դաշնակցութեան միտքը աւելի և աւելի կուսակիցներ է գտնում սուլթանի խորհրդատուների շրջանում: Թիւրքաց պաշտօնական թերթերը, որոնք մինչև այժմ խօսում էին միմիայն Գերմանիային մօտենալու շահերի մասին, արդէն այժմ սկսել են ակնարկել Գերմանիայի հետ դաշնակցութեան վրա, աւելացնելով որ այդ դաշնի մէջ ցանկանում է մասնակցել և Իտալիան: Իշխան Բիսմարկ հասկացրեց Թիւրքաց նուիրակներին, որ յայտնի դէպքերում Թիւրքիան կարող է հաշւել Գերմանիայի օգնութեան վրա և որպէս ապացոյց իր բարեկամական յարաբերութիւնների դէպի Օսմանեան պետութիւնը, Գերմանիան անմիջապէս փոխեց իր քաղաքականութիւնը Հայոց խնդրի վերա-